2008 թ. ռուս-վրացական պատերազմի ազդեցությունը ՀՀ արտաքին և դաշինքային հարաբերությունների տարածաշրջանային չափման մեջ. Նեոռեալիստական հայացք

Սուքիասյան Ն. Ա.
ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Քաղաքական գործընթացների, ինստիտուտների ամբիոն, ասպիրանտ (Երևան, ՀՀ)
nareksukiasyan@gmail.com

Հանգուցաբառեր՝ ՀՀ արտաքին քաղաքականություն, ՀՀ-ՌԴ հարաբերություններ, նեոռալիզմ, ռուս-վրացական պատերազմ, ինտեգրացիոն երկընտրանք, ԵԱՏՄ, ենթադաշնակցում, Հարավային Կովկաս, դաշինքային հարաբերություններ, միջազգային ինտեգրում, ռազմաքաղաքական համագործակցություն

Региональное измерение влияния российско-грузинской войны 2008 года на внешние и союзнические отношения Армении. Неореалистическая перспектива

Сукиасян Н. А.
ЕГУ, факультет международных отношений, кафедра политических процессов, институтов, аспирант (Ереван, РА)
nareksukiasyan@gmail.com

Аннотация. Цель статьи - выявить трансформации региональных факторов нереалистического характера, которые в среднесрочной перспективе обусловили внешнюю политику Армении, в частности, ее отношения с Россией после российско-грузинской войны 2008 года. В статье рассматриваются не только вопросы трансформации этих региональных факторов, но и их влияние - сдерживающее или стимулирующее - на внешнюю и союзническую политику Армении. В ней делается вывод, что большинство выявленных неореалистических факторов оказали сдерживающее влияние не только на армяно-российские отношения, но и на внешнюю политику Армении в целом. Существовавшее после войны окно возможностей, которое могло позволить преодолеть или смягчить некоторые из угроз, создающих почву для политики бандвагонинга Армении с Россией, вскоре было закрыто, создав вместо меньших угроз еще большие, что усилило императив углубления бандвагонинга.
Ключевые слова. Внешняя политика Республики Армения, армяно-российские отношения, неореализм, российско-грузинская война, интеграционная дилемма, ЕАЭС, бандвагонинг, Южный Кавказ, союзнические отношения, международная интеграция, военно-политическое сотрудничество.

The Regional Dimension of the Effect of the 2008 Russian-Georgian War on Armenia's Foreign Andallied Relations. A Neorealistic Perspective

Sukiasyan N. A.
YSU, Faculty of International Relations, Chair of Political Processes, Institutions, PhD student (Yerevan, RA)
nareksukiasyan@gmail.com

Abstract. The objective of the article is to reveal the transformations of the regional factors of the neorealist nature that in the mid-term have conditioned Armenia's foreign policy, particularly its relations with Russia in the aftermath if the 2008 Russian-Georgian war.
The article examines not only the questions regarding the transformation of those regional factors but also the their effect - weather constraining or enabling – on Armenia's foreign and alliance policies. It concludes that most of the revealed neorealist factors have had a constraining effect not only on the Armenian-Russian relations but on Armenia's foreign policy in general. The window of opportunity that existed in the aftermath of the war that could enable overcoming or ameliorating some of the threats that lay the ground for Armenia's bandwagoning policy with Russia, was soon shut creating even more, instead of less threats, thus boosting the imperative of deeper bandwagon.
Keywords. Foreign policy of the Republic of Armenia, Armenian-Russian relations, neorealism, Russian-Georgian war, integration dilemma, EAEU, bandwagoning, South Caucasus, allied relations, international integration, military-political cooperation.

Կառուցվածքային ռեալիզմի (նեոռեալիզմի) ու հատկապես դրա պաշտպանողական ենթաճյուղի համար առանցքային դերակատարություն ունի միջազգային այն համակարգը, որի

մեջ գործում է պետությունը և ձևակերպում իր արձագանքը դրան, քաղաքականությունը՝ ուղղված օգուտների մաքսիմիզացիային, ու հատկապապես փոքր պետությունների պարագայում՝ գոյապահպանմանը [**1**, էջ 128; **2**, էջ 28; **3**, էջ 17; **4**, էջ 108; **5**, էջ 23]: Այս հոդվածի նպատակն է նեոռեալիզմի տեսամեթոդական հիմքի վրա ուսումնասիրել Հայաստանի արտաքին քաղաքականությունն և հայ-ռուսական հարաբերությունները պայմանավորող հիմնական չափումների վերափոխումները ռուս-վրացական պատերազմի արդյունքում՝ հիմք ընդունելով նման հետազոտության համար մշակված մեթոդաբանությանը [**6**], որը հայ-ռուսական հարաբերությունների չափումների ուսումնասիրությունը իրականացնում է երեք հարթություններում՝ ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային և գլոբալ նշանակության: Այս հոդվածը քննելու է դրանցից տարածաշրջանային հարթությունը:

Այսպիսով, հոդվածի նպատակն է՝ *վեր հանել* 2008 թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում միջնաժամկետ հեռանկարում ՀՀ արտաքին քաղաքականության՝ մասնավորապես ՀՀ–ՌԴ հարաբերությունների վրա ազդող նեոռեալիստական բնույթի տարածաշրջանային չափումների վերափոխումները: Հոդվածի շրջանակներում քննվում են հետևյալ հետազոտական հարցերը՝

- Փոփոխվե՞լ են արդյոք և ինչպե՞ս են փոփոխվել 2008 թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում ՀՀ արտաքին քաղաքականությունը պայմանավորող տարածաշրջանային չափումները:
- Նշված չափումները խթանե՞լ, թե՞ սահմանափակել են ՀՀ արտաքին և դաշինքային քաղաքականությունը նշված ժամանակահատվածում:

Տարածաշրջանային չափումներից սկզբունքային նշանակություն ունի տարածաշրջանային պետությունների կողմից ՀՀ-ին ուղղված սպառնալիքների մշտադիտարկումը 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո՝ պարզելու, թե ինչ ու ինչպիսի ազդեցություն են դրանք ունեցել ՀՀ արտաքին և դաշինքային քաղաքականության վրա: Պատերազմի առաջին օրերին Ադրբեջանի քաղաքական էլիտան ոգևորությամբ ընդունեց Վրաստանի նախահարձակ գործողությունները՝ զուգահեռներ տանելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ և լեգիտիմացում գտնելով ուժի կիրառմամբ տարածքային խնդրի լուծման մեջ [**7**, էջ 63]: Սակայն ՌԴ ներգրավումը և Վրաստանի համար պատերազմի կորստաբեր արդյունքները, ինչպես չակերտավոր նշում է Սերգեյ Մինասյանը, Ադրբեջանին բերեցին «կառուցողական դաշտ» [**7**, էջ 64]՝ ի ցույց դնելով բոլոր այն վտանգները, որոնք կարող էին ստեղծվել հենց Ադրբեջանի համար Արցախում նման արկածախնդրության դեպքում: Պատերազմը նաև Ադրբեջանի համար ի ցույց դրեց Ռուսաստանի և Արևմուտքի ազդեցության խորություններն ու հանձնառությունները տարածաշրջանում՝ ընդգծելով էներգակիրների արտահանման համար ՌԴ-ի անվտանգային դերը Հարավային Կովկասում, ինչպես նաև Արևմտյան անվտանգային առարկայական երաշխիքների կամ դրանց հեռանկարի բացակայության պարագայում ՌԴ-ի հետ խնդրային հարաբերություններ ունենալու վտանգները Ադրբեջանի համար, հատկապես երբ Ռուսաստանը Հայաստանի ռազմական դաշնակիցն էր [**8**, էջ 16; **9**, էջ 6]: Եթե 2007 թ. Ադրբեջանի Ազգային անվտանգության հայեցակարգը եվրոատլանտյան ինտեգրումը համարում էր ռազմավարական նպատակ, ապա ըստ 2010 թ. Ռազմական դոկտրինի՝ պետությունը պատրաստ է միայն համագործակցել ՆԱՏՕ-ի հետ, առանց ինտեգրման մասին հիշատակման [**10**, էջեր 85-86]: Պատերազմից հետո վերադասավորման արդյունքում Ադրբեջանի դիրքերի մեղմացման արտացոլումներից է (ինչպես նաև ՌԴ միջնորդական ջանքերի ակտիվացման) պատերազմից անմիջապես հետո սկսված բանակցությունների արդյունքում նույն տարվա նոյեմբերին Մոսկվայում ստորագրված եռակողմ հռչակագիրը՝ առաջին ստորարգված փաստաթուղթը հրադադարի մասին բիշքեկյան համաձայնագրից հետո: Այն հաստատում էր կողմերի պատրաստականությունը ապահովելու տարածաշրջանային կայունությունը և քաղաքական լուծում տալ հակամարտությանը [**11**]: Սակայն Ադրբեջանի «կառուցողական» նման շրջադարձը ուղղված էր ոչ թե Հայաստանի և Արցախի հանդեպ սպառնալիքի նվազեցմանը, այլ արձագանք էր պատերազմի արդյունքում տարածաշրջանում Ռուսաստանի դերի և վերջինիս նկատմամբ արտաքին քաղաքականության ռացիոնալիզացմանը: Այս հանգամանքը առաջին հերթին արտահայտվում է պատերազմից հետո վերոնշյալ վերադասավորմանը զուգահեռ Ադրբեջանի ռազմական ծախսերի կտրուկ աճի մեջ: 2011 թ. արդեն աճող ռազմական հռետորաբանությանը զուգահեռ [**12**, էջ 2 ;**10**, էջ 76; **13**, էջ 70] Ադրբեջանի ռազմական ծախսերը հասան պետության ՀՆԱ-ի մոտ 20%-ին, կամ 3.1-.3.3 մլրդ դոլարի, որից 1.4-ը ուղղված էր ժամանակակից սպառազինության գնմանը[1]: Կարելի է

[1] 2013 թ. հայտնի դարձավ Ռուսաստանից Ադրբեջանին մոտ 1 մլրդ դոլար արժողությամբ սպառազինության վաճառքի մասին: Բացի այդ՝ ըստ Ռազմ. ինֆոյի «2010-2011-ին կնքվել ու մասամբ իրականացվել են [Ռուսաստանից] Ադրբեջանին 2 դիվիզիոն Ս-300ՊՄՈ-2 զենիթահրթիռային համակարգի, «Ցոռ-2ՄԷ» զենիթահրթիռային կոմպլեքսի մի

նաև նկատել ռազմական ուժի կիրառման մտադրությունների աճ այն հանգամանքում, որ օրինակ 2007 թ. Ադրբեջանի Ազգային անվտանգության ռազմավարության մեջ բացակայում է ռազմական ուժի կիրառման մասին հիշատակում, մինչդեռ 2010 թ. Ռազմական դոկտրինը վերապահում է նման իրավունք [**10**, էջ 80-81]:

Աճող ռազմական հռետորաբանության և սպառազինությունների արդիականացմանը զուգահեռ, հատկապես 2010 թ. սկսած նկատելիորեն սկսեցին աճել սահմանային միջադեպերը, դիվերսիոն գործողությունները և ռազմական սադրանքները, որոնք տարեցտարի մեծացնում էին թե՛ զոհերի քանակը, թե՛ կիրառվող զինատեսակների հզորությունը, թե՛ մարտական գործողությունների աշխարհագրությունը՝ ներառելով ոչ միայն ԼՂՀ շփման գիծը, այլ նաև հայ-ադրբեջանական սահմանը [**12**, էջեր 3-5; **14**; **15**]:

Մոսկվայի հռչակագրով մեկնարկած ՌԴ-ի կողմից միջնորդական ջանքերի ակտիվացման այս փուլի գագաթնակետ և վախճան կարելի է համարել 2011 թ. կազանյան բանակցությունները, որտեղ ՀՀ-ն, համաձայն պաշտոնական հաղորդագրությունների՝ պատրաստ էր փոխձիջման միջոցով նվազեցնել արտաքին սպառնալիքների մակարդակը, սակայն գործընթացը տորպեդահարվեց Ադրբեջանի կողմից [**16**]:

Ռուս-վրացական պատերազմի արդյունքները թե՛ Հայաստանին, թե՛ Թուրքիային պարտադրել էին վերանայել երկկողմ հարաբերություններում արտաքին քաղաքական իրենց դրդապատճառներն ու մոտեցումները: Մինչ պատերազմի արդյունքում այս չափման վերափոխման քննարկմանն անցնելը, հարկ է նշել, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղված որոշ քայլեր[2] ձեռնարկվել էին դեռևս պատերազմին անմիջապես նախորդած շրջանում, իսկ արդեն պատերազմի հետևաքները միայն արագացրին արդեն սկսված գործընթացները: Այսպես կոչված «Ֆուտբոլային դիվանագիտությունը» նպատակ ուներ առանց նախապայմանների հաստատել դիվանագիտական հարաբերություններ, բացել հայ-թուրքական սահմանը և զարգացնել երկկողմ հարաբերությունները [**17**, **18**]: Թուրքիայի համար Հայաստանի հետ հակամարտային հարաբերությունների փոխարինումը համագործակցայինով կարող էր բարձրացնել տարածաշրջանում իր հարաբերական հզորությունը՝ բարձրացնելով վերջինիս ներկայությունն ու ազդեցությունը Հարավային Կովկասում: Նման հաշվարկը հիմնված էր Վրաստանի տարածքով հաղորդակցությունների անհուսալիության պայմաններում դրանց բազմազանեցման անհրաժեշտության [**19**], եվրոինտեգրման՝ որպես արտաքին քաղաքական առաջնահերթության [**7**, էջ 61], ինչպես նաև մի շարք տնտեսական նկատառումների վրա [**13**, էջեր 75-76; **20**]: Բացի այդ, Թուրքիայի տարածաշրջանային ազդեցության բարձրացմանը, որը կարող էր լինել հարաբերությունների կարգավորման հնարավոր արդյունք, տարբեր դրդապատճառներով համընկնում էր նաև Թուրքիայի արևմտյան գործընկերների (հակակշռել տարածաշրջանում ՌԴ-ի ազդեցությանը [**21**]) և ՌԴ-ի շահերին (թուրքական ներկայության գերադասումը ամերիկյանին [**9**, էջ 9; **22**, էջ 24; **23**, էջ 2], Վրաստանի իզոլացում [**23**, էջեր 1-2, **5**; **7**, էջեր 59-62]):

Միևնույն ժամանակ Թուրքիան, ընդունելով տարածաշրջանում սեփական հարաբերական հզորության դեռևս սահմանափակ լինելու հանգամանքը, պատերազմի ընթացքում և դրանից հետո հաշվի էր նստում տարածաշրջանում Ռուսաստանի գերակա շահերի հետ, ինչպես օրինակ պատերազմի ընթացքում չեզոք դիրք պահպանելով [**24**, էջ 11] կամ սահմանափակելով Ամերիկյան հումանիտար նավերի մուտքը Սեւ ծով՝ ըստ Մոնտրոյի կոնվենցիայի [**22**, էջ 28]: Սակայն փորձելով խուսափել տարածաշրջանում կրտսեր գործընկերոջ կարգավիճակից [**23**, էջ 15] և ինստիտուցիոնալիզացնել սեփական ազդեցությունն ու հավասար կարգավիճակը՝ վերոնշյալ շահերի հետ համահունչ վարչապետ Էրդողանը Մոսկվայում հայտարարեց Համագործակցության եւ կայունության տարածաշրջանային պլատֆորմի նախաձեռնության և «Ֆուտբոլային դիվանագիտության» մասին, որոնց տապալման[3] հիմնական պատճառները (Ադրբեջանի և հետագայում Թուրքիայի կողմից կարգավորման գործընթացի կապումը Ղարաբաղյան հակամարտության լուծմանը, Թուրքիայի էներգետիկ կախվածությունը Ադրբեջանից [**21**, էջ 20], տարածքային հիմնախնդիրների պատճառով Վրաստանի անհամաձայնությունը, Արևմուտքի մեկուսացումը պլատֆորմից [**23**, էջ 7-8], Թուրքիայի վերադարձը նախապայմանների առաջադրման քաղաքականությանը [**25**] և այլն) մատնանշում են թուրքական ուղղությամբ ՀՀ արտաքին սպառնալիքները մեղմելու հնարավորության պատուհանի փակումը: Ավելին, ի թիվս այլ գործոնների, ռուս-վրացական պատերազմի հետևանքով տարածաշրջանում սկիզբ առած անվտանգային բնույթի գործընթացները շղթայաբար հանգեց-

---

քանի մարտկոց, 60 միավոր Մի-17 և 24 նմուշ Մի-35Մ հարվածային ուղղաթիռների տրամադրումը՝ ընդհանուր առմամբ 3 մլրդ դոլար արժողությամբ» [**38**]:

[2] Մինչ այդ կողմերի միջև բանակցություններ են ընթացել Շվեյցարիայում իսկ Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային խաղի հրավերը Սերժ Սարգսյանը ուղարկել էր դեռևս պատերազմից առաջ [**23**, էջ 9; **7**, էջ 61]:

[3] Կարգավորման գործընթացի և պլատֆորմի մասին տե՛ս [**33**, 17, 39]:

ին թե՛ թուրքական, թե՛ Ադրբեջանական ուղղություններով ՀՀ արտաքին սպառնալիքների աճին: Այս չափման ռազմաքաղաքական սպառնալիքի գնահատման մեջ որպես հետպատերազմյան շղթայական գործընթացի պայմանական շրջադարձային կետ անհրաժեշտ է նաև հաշվի առնել 2010 թ. ամռանը Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ կնքված «Ռազմավարական գործընկերության եւ փոխօգնության մասին» պայմանագիրը, ըստ որի կողմերը պարտավորվում են «առկա բոլոր հնարավորությունների կիրառմամբ» [**26**, էջ 70] պաշտպանել միմյանց հարձակման կամ ագրեսիայի պարագայում, ինչպես նաև համապարփակ կերպով զարգացնել ռազմական համագործակցությունը [**27**, էջ 222]:

Ինչպե՞ս է ՀՀ արտաքին և ՌԴ-ի հետ դաշինքային քաղաքականությունը՝ որպես սպառնալիքների հավասարակշռման գործիք արձագանքել և վերափոխվել 2008 թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում ի հայտ եկած կամ ձևափոխված տարածաշրջանային չափման այս սպառնալիքներին: Նախ, բացի վերոնշյալ հաղորդակցային բնույթի սպառնալիքներից, տարածքային հակամարտություններում սկզբունքայնության հրամայական ունեցող Հայաստանին պատերազմը անմիջականորեն կանգնեցրեց ռազմավարական գործընկեր-հարևանի և դաշնակցի միջև մանևրելու ճգնաժամի առաջ՝ մի կողմից հումանիտար աջակցություն ցուցաբերելով Վրաստանին և խուսափելով պատերազմի մեջ ներքաշվելուց, մյուս կողմից միանալով ՀԱՊԿ հայտարարությանը, որը քննադատում էր ՆԱՏՕ-ի արևելյան ընդլայնումը, Վրաստանի կողմից հակամարտությանը ռազմական լուծում տալու փորձը և աջակցում ՌԴ-ի ջանքերը Հարավային Օսեթիայում և Աբխազիայում անվտանգության հաստատման հարցում՝ առանց ճանաչելու դրանց անկախությունը [**28**]:

Ինչպես փոքր ինչ չափազնացված և տարածաշրջանում Թուրքիայի կարևորությունը ստորադասելով նախանշել էր Զբիգնև Բժեզինսկին՝ Վրաստանի տարածքով կասպիան էներգակիրների արտահանմանն ուղղված սպառնալիքի դեպքում, ինչը ի ցույց դրեց պատերազմը, «Ադրբեջանը Մոսկվային ենթարկվելու այլընտրանք չի ունենա» [**29**]: Պատերազմին հաջորդած զարգացումների արդյունքում Ադրբեջան-Ռուսաստան հարաբերություններում վերոնշյալ մերձեցումը ընդգծվում էր նաև նույն ժամանակահատվածում Ռուսաստանից ռազմական գնումների զգալի աճով, ինչն ըստ ռուսական կողմի՝ թույլ էր տալիս կառավարելի դարձնել սպառազինությունների մրցավազքը [**30**] որպես հակամարտող կողմերի միջև փոխզսպիչ գործոն: Պատերազմի արդյունքում բարելավվեցին նաև ՌԴ-ԱՀ էներգետիկ փոխհարաբերությունները: [**24**, էջ 9] Սակայն, ակնհայտորեն այս գործոնը բարձրացնում էր Ադրբեջանի հարաբերական կարևորությունը Ռուսաստանի համար [**20**, էջ 14]՝ որպես կոմերցիոն գործընկերոջ (որի հետ, ի տարբերություն ՀՀ-ի, գործարքները կնքվում էին միջազգային շուկայական գներով), ինչպես նաև լեգիտիմացնում թե՛ ՌԴ դերը՝ որպես անկողմնակալ միջնորդի, թե՛ Հայաստանում տեղակայված սեփական սպառազինության արդիականացումը [**9**, էջ 6]: Բացի այդ, Ադրբեջանի տարածաշրջանային հարաբերական կարևորությունը ՌԴ-ի համար աճել էր նաև պատերազմի արդյունքում Վրաստանի կորստով, և անկախ Հայաստանի հետ կապող ինստիտուցիոնալ կապերից (ՀԱՊԿ)՝ ՌԴ շահերից չէր բխում Ադրբեջանի հնարավոր մերձեցումը տարածշրջանային այլ ուժերի հետ՝ ի հակակշիռ ՌԴ-ին [**31**, էջ 18-20, 32]: Նեոռեալիստական տարածաշրջանային չափման այս միտումը բացասական ազդեցություն ունեցավ Հայաստանի դաշինքային քաղաքականության վրա, որը ծառայում էր որպես ռազմաքաղաքական սպառնալիքների բալանսավորող միջոց, որովհետև ՌԴ-ի համար սեփական տարածաշրջանային շահերի հրամայականով պայմանավորված Ադրբեջանի հարաբերական կարևորության աճը անուղղակիորեն հանգեցնում էր ո՛չ միայն Ադրբեջանի հետ սպառազինության մրցավազքի խորացմանը, այլ նաև դաշնակից պետությունների միջև խորացնում էր երրորդ պետության՝ Ադրբեջանի հանդեպ ընկալումների և վերաբերմունքի տարբերությունը՝ էլ ավելի տեղափոխելով ՌԴ-ի առաջնային դերը դաշնակցից դեպի արդար միջնորդի տիրույթ: Այս միտումը, համակցված Թուրքիայի տարածաշրջանային ներգրավածության աճի ու թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական ներուժի խթանման հանգամանքով, Հայաստանին (և Ռուսաստանին) պարտադրում էին գնալ այնպիսի քայլերի, որոնք էլ ավելի պետք է բարձրացնեին դաշինքային հարաբերությունների մակարդակը և Հայաստանի հարաբերական աշխարհաքաղաքական նշանակությունը Ռուսաստանի համար՝ ինչի դրսևորումներից են 2010 թ. Հայաստանում տեղակայված ռազմաբազայի պայմանագրի ժամկետի երկարաձգման մասին N5 արձանագրության կնքումը [**33**, էջեր 88-89][4], 2013 թ. «Ռուսաստանի և Հայաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման» վերաբերյալ համաձայնագրի կնքումը, ավելի վաղ նշված ենթակառուցված-

[4] Ըստ արձանագրության՝ ռազմաբազայի տեղակայումը երկարաձգվեց մինչև 2045 թ.,: Դրա պատասխանատվության գոտին նախկին ԽՍՀՄ սահմաններից ընդլայնվում էր ու ներառում ՀՀ ամբողջ տարածքը և ռուսական կողմը ստանձնում էր հայկական զինուժի արդիականացման պարտավորություն [**40**, **25**]:

քային գործարքները, Ղրիմի ճգնաժամից հետո միջազգային հարթակներում քաղաքական աջակցությունը, ՄՄ-ին և ԵԱՏՄ-ին անդամակցությունը:

Այսպիսով, ռուս-վրացական պատերազմի ուղղակի կամ անուղղակի հետևանքով տարածաշրջանային դերակատարների շահերի և ՀՀ անվտանգային միջավայրի վերափոխումները՝ այն է Ռուսաստանի համար Ադրբեջանի տարածաշրջանային նշանակության աճը, Թուրքիայի շահերի ակտիվ ընդլայնումը Հարավային Կովկասում, Ադրբեջանի (և Թուրքիայի) կողմից Հայաստանի և Արցախի հանդեպ սպառնալիքների մեծացումը խորացրին ՀՀ արտաքին սպառնալիքների սաստկությունը՝ ստիպելով նոր մակարդակի հասցնել ՌԴ-ի հետ դաշինքային հարաբերությունները (*մեծացնելով ենթադաշնակցման ասիմետրիան*)՝ վերոնշյալ սպառնալիքները առնվազն կարճաժամկետ հեռանկարում արդյունավետ բալանսավորելու նպատակով: Երկարաժամկետ կտրվածքում վերոնշյալ նեոռեալիստական միտումների պահպանումը նշանակում էր սպառնալիքի մակարդակի շարունակական աճ, մինչդեռ դաշինքային հարաբերությունները՝ որպես սպառնալիքների արտաքին բալանսավորման գործիք առավել սահմանափակ են՝ հաշվի առնելով դրանց խորացման ինստիտուցիոնալ հնարավորությունների սահմանները, ՀՀ ներքին կառուցվածքային սահմանափակումները, ՌԴ-ի՝ հակամարտության կարգավորման միջնորդ կողմ լինելու հանգամանքը և այլն:

Միևնույն ժամանակ, նեոռեալիստական մեկ այլ չափման մեջ՝ պաշտպանողական-հարձակողական կարողությունների հարթությունում՝ ըստ առնվազն 2011 թ. տվյալների Հայաստանը ձեռք էր բերել 300 մմ «Սմերչ» և «Տոչկա ՈՒ» հրթիռային համակարգեր, ինչը կրճատում էր այդ կարողությունների տարբերությունը՝ դառնալով զսպող գործոն, քանի որ մինչ այդ հեռահար զենքի առկայությունը Ադրբեջանի զինանոցում բարձրացնում էր Ադրբեջանի համար արագ և կործանիչ պատերազմի հնարավորությունը, իսկ այս պարագայում բարձրացնում էր պատերազմի գինը ծախս-օգուտ հաշվարկում [**13**, էջեր 71-72]: Այս համատեքստում հարկ է նաև նշել տվյալ ժամանակահատվածում փորձագետների կողմից դեռևս չճշտված, բայց հավանական համարվող Իսկանդեր օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրի մատակարարումը ՌԴ-ից կամ առնվազն դրա վերաբերյալ համաձայնության ձեռք բերումը [**34**]: 2015 թ. կնքվեց «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիրը [**35**]՝ հայկական կողմին հնարավորություն տալով օգտվել Ս-300 զենիթահրթիռային համալիրներից և 4-րդ սերնդի կործանիչներից [**36**, էջ 79], ինչպես նաև ձեռք բերվեց պայմանավորվածություն 200 մլն դոլար վարկային ծավոլով ռուսական զենքի գնման համար:

Ինչ վերաբերում է սպառնալիքների աշխարհագրական մերձավորության չափմանը, ապա բացի հեռահար զինատեսակների փոխզսպման գործոնից, այս ժամանակաշրջանում աշխարհագրական նշանակության զգալի փոփոխություններ չեն եղել, բացառությամբ 2014 թ. հունիսին Նախիջևանի սահմանում հայկական մի քանի գերիշխող դիրքերի հիմնումից [**37**] և շփման գծում Ադրբեջանական մարտական հենակետերի կահավորման մակարդակի բարելավումներից: Այնուամենայնիվ, վերոնշյալ ներքին կառուցվածքային խնդիրների համատեքստում առնվազն երկարաժամկետ հեռանկարում հայ-ադրբեջանական պաշտպանողական-հարձակողական կարողությունների հարաբերակցությունը մատնանշում էր սպառազինությունների մրցավազքում Հայաստանի անբարենպաստ դիրքերը:

Այսպիսով, հայ-ռուսական հարաբերությունների՝ հետ-ռուս-վրացական պատերազմի տարածաշրջանային չափումները ունեցել են հիմնականում սահմանափակող ազդեցություն, չնայած դրան անմիջապես հաջորդած կարճաժամկետ հեռանկարում բացված սպառնալիքների նվազեցման պատուհին: Կարելի է ամփոփել պատերազմի ուղիղ և անուղղակի հետևանքները (ինչպես նաև այս չափման այլ գործոններ, որոնք ի հայտ են եկել կամ ձևափոխվել են 2008-2016 թթ. ընթացքում՝ անկախ պատերազմից)՝ փորձելով դասակարգել դրանք ըստ ՀՀ արտաքին դաշինքային քաղաքականությունը խթանող կամ սահմանափակող բնույթի:

Ուղիղ-սահմանափակող՝

- Հակամարտող ռազմավարական գործընկեր-հարևանի և դաշնակցի միջև պատերազմական հարաբերությունների ու սեփական շահերի ճգնաժամային կառավարում:
- Հաղորդակցությունների սահմանափակում, որի արդյքունքում...

Ուղիղ-խթանող՝

- ....Հաղորդակցությունների բազմազանեցման քաղաքականության ակտիվացում:
- Տարածաշրջանի աշխարհաքաղաքական և տնտեսական կարևության հանդեպ միջազգային ուշադրության աճ:

Անուղղակի-խթանող՝

- Արցախյան հակամարտության լուծմանն ուղղված միջազգային միջնորդական ջանքերի ակտիվացում:
- Ադրբեջանի տեսանկյունից հակամարտության՝ ռազմական ճանապարհով լուծման աննպատակահարմար նախադեպի հաստատում: Սպառազինությունների մրցավազքի արդյունքում (իհարկե, սա անուղղակի-խթանող գործոն է) ռազմատեխնիկական արդիականացում և վերազինում:

Անուղղակի-սահմանափակող՝

- Ռուսաստանի համար Ադրբեջանի տարածաշրջանային դերի աճ:
- Ադրբեջանական բանակի ինտենսիվ զինում և արդիականացում, ռազմական հռետորաբանության և սահմանային միջադեպերի կտրուկ աճ:
- Որի արդյունքում սպառազինությունների հյուծիչ մրցավազքի մեջ ներքաշում և Ադրբեջանի աննախադեպ զինում:
- Հարավային Կովկասում Թուրքիայի ներկայության աճ:
- Թուրք-Ադրբեջանական ռազմաքաղաքական հարաբերությունների կոնսոլիդացիա և զարգացում:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ 2008-2016 թթ. ընթացքում նեոռեալիստական բնույթի վերոնշյալ չափումների գերակշիռ մասը բացասական ազդեցություն են ունեցել ոչ միայն հայ-ռուսական հարաբերությունների վրա, այլև ՀՀ արտաքին քաղաքականության վրա ընդհանրապես: Տարածաշրջանային չափման մեջ տարածաշրջանային սպառնալիքների հաղթահարման հետպատերազմական պատուհանը արագ փակվեց՝ արդյունքում անուղղակիորեն հանգեցնելով ոչ թե ավելի քիչ, այլ ավելի շատ սպառնալիքների, որոնք էլ, իրենց հերթին, առաջ քաշեցին ենթադաշնակցման խորացման հրամայականը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Waltz K.**, Theory of international politics, Reading: Addison-Wesley Pub. Co., 1979.
2. **Waltz K.**, Structural Realism after the Cold War, *International Security,* vol. 25, no. 1, 5-41, 2000.
3. **Walt S. M.**, The Origins of Alliance, Ithaca: Cornell University Press, 1987.
4. **Dunne T. and Brian S.**, Chapter 6: Realism, in *The globalization of world politics: an introduction to international relations*, 6 ed., Oxford, Oxford University Press, 2014, 99-112.
5. **Goetschel L.**, The Foreign and Security Policy Interests of Small States in Today's Europe, in *Small States Inside and Outside the European Union. Interests and Policies*, Boston, Springer US, 1998, 13-31.
6. **Սուքիասյան Ն.**, ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքային գործոնների տեսականացման փորձ և այդ գործոնների ազդեցության էվոլյուցիան, *Գիտական Արցախ,* vol. 4, no. 7, 61-72, 2020.
7. **Минасян С.**, Военно-политические итоги«пятидневной войны, *21-й ВЕК,* vol. 1, no. 9, 53-75, 2009.
8. **CIPDD**, After August 2008: Consequences of the Russian-Georgian War, The Caucasus Institute for Peace, Democracy and Development, Tbilisi, 2008.
9. **Romashov V. and Rytövuori-Apunen H.**, Russia's Karabakh policy: new momentum in regional perspective, *Caucasus Survey,* vol. 5, no. 2, 160-176, 2016.
10. **Kocharyan H. and Sukiasyan S.**, Regional Security Dynamics: Azerbaijan, in *Regional and National Security Dynamics: Armenian-Turkish Relations*, Yerevan, 2017.
11. **Kremlin.ru**, Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации, 2 November 2008. URL: http://kremlin.ru/supplement/232.
12. **Crisis Group Europe,** Armenia and Azerbaijan: Preventing War, Crisis Group Europe, Tbilisi/Baku/Yerevan/Istanbul/Brussels, 2011.
13. **Giragosian R. and Minasyan S.**, Recent Trends in Security and Stability in the South Caucasus, *Connections,* vol. 11, no. 1, 69-76, 2011.
14. **Sanamyan E.**, Loose Restraints: A Look at the Increasingly Shaky Karabagh Ceasefire, 4 February 2015. URL: https://armenianweekly.com/2015/02/04/karabagh/. [Accessed 2 February 2021].
15. **Razm.info**, 2014թ. օգոստոսյան պատերազմը. հետադարձ հայացք, 4 August 2018. URL: https://razm.info/128210. [Accessed 3 February 2021].
16. **Danielyan E.**, Armenia, Azerbaijan Again Fail to Agree On Karabakh Peace Framework, 29 June 2011. URL: https://jamestown.org/program/armenia-azerbaijan-again-fail-to-agree-on-karabakh-peace-framework/. [Accessed 16 March 2021].
17. **Ter-Matevosyan V.**, Review on Ünal Çeviköz's paper "perspectives for security and stability in the South Caucasus: the role of normalisation between Turkey and Armenia", in *Regional and National Security Dynamics: Armenia-Turkey*, Yerevan, 2017.
18. **Azatutyun.am**, Հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների զարգացման եւ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրությունները, 1 September 2009. URL:

https://www.azatutyun.am/a/1812299.html. [Accessed 12 April 2021].

19. **Бабаджан А.**, Армения в турецкой схеме - альтернативный Грузии маршрут прокачки каспийского газа: Али Бабаджан, 8 September 2008. URL: https://regnum.ru/news/polit/1052099.html. [Accessed 27 January 2021].
20. **Armenyan H.**, Analysis of "Gains and Losses"of MainActor-States fromNagorno-Karabakh Conflict, October 2012. URL: https://www.academia.edu/7184316/Analysis_of_interests_of_main_international_and_regional_actor_states_in_Nagorno_Karabakh_conflict. [Accessed 14 February 2021].
21. **Abilov S.**, The Discourse "One Nation Two State": The Position of Turkey in the Nagorno-Karabakh Conflict, *Journal of Caspian Affairs,* vol. 1, no. 2, 29-58, 2015.
22. **Гоксель Д.**, Кавказская политика Турции, in *Кавказское соседство: Турция и Южный Кавказ*, Yerevan , Институт Кавказа, 2008, 15-30.
23. **Winrow G.**, Turkey, Russia and the Caucasus: Common and Diverging Interests, Chatham House, Lodon, 2009.
24. **Mikhelidze N.**, After the 2008 Russia-Georgia war: implications for the wider Caucasus and prospects for Western involvement in conflict resolution, Istituto Affari Internazionali, Rome, 2009.
25. **Punsmann B. G., Anjaparidze Z., Avetisyan S., Chania I., Romashov V. and Shirinov R.**, Review of Isolation Policies Within and Around the South Caucasus, Caucasus Edition, 2016.
26. **Governments of Turkey and Azerbaijan**, Agreement on strategic partnership and mutual assistance between the Republic of Turkey and the Republic of Azerbaijan, 16 August 2010. URL: https://www.un-ilibrary.org/content/books/9789210477086s002-c004/read. [Accessed 3 March 2021].
27. **German T.**, The Nagorno-Karabakh Conflict between Azerbaijan and Armenia: Security Issues in the Caucasus, *Journal of Muslim Minority Affairs,* vol. 32, no. 2, 216-229, 2012.
28. **ОДКБ**, Декларация Московской сессии Совета коллективной безопасности Организации Договора о коллективной безопасности, 5 September 2008. URL: https://odkb-csto.org/documents/accepted-docs/deklaratsiya-moskovskoy-sessii-soveta-kollektivnoy-bezopasnosti-organizatsii-dogovora-o-kollektivnoy/. [Accessed 12 February 2021].
29. **Brzezinski Z.**, Russia must re-focus with post-imperial eyes, 1 July 2009. URL: http://tomweston.net/postimperial.pdf. [Accessed 1 February 2021].
30. **Government.ru**, Dmitry Medvedev's interview to Rossiya TV Channel's Vesti v Subbotu, 9 April 2016. URL: http://government.ru/en/news/22541/. [Accessed 10 February 2021].
31. **Ֆորոյան Տ.**, Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո, Երևան: Տիգրան Մեծ, 2009.
32. **Маркедонов С.**, Россия–Азербайджан: противоречивое партнерство, 1 October 2013. URL: https://russiancouncil.ru/en/analytics-and-comments/analytics/russia-azerbaijan-an-ambivalent-partnership/. [Accessed 13 February 2021].
33. **Минасян С.**, Внешняя политика постсоветской Армнии: 20 лет одновременно на нескольких стульях, *Мировая экономика и международные отношения,* no. 1, 85-92, 2013.
34. **Razm.info**, Իսկանդերը՝ Հայաստանում. իրականությո՞ւն, թե՞ սպասելիք, 21 January 2014. URL: https://razm.info/29482. [Accessed 14 February 2021].
35. **Razm.info**, ՀՀ ՊՆ պարզաբանումը ՀՀ-ՌԴ միավորված ՀՕՊ համակարգի համաձայնագրի վերաբերյալ, 9 June 2016. URL: https://razm.info/84355.
36. **Asker A.**, The Advanced Stage of Russia-Armenia Military Cooperation: The Joint Military Force, *Review of Armenian Studies,* no. 35, 59-89, 2017.
37. **Վրթանեսյան Կ.**, Հայկական բանակը Նախիջևանում հողային ձեռքբերումնե՞ր, թե՞ դիրքերի բարելավում է արել, June 2014. URL: https://www.shantnews.am/news/view/13994.html. [Accessed 12 February 2021].
38. **Margaryan A.**, Ադրբեջանի՝ ՌԴ-ից սպառազինության գնումների նոր մանրամասներ, 18 June 2013. URL: https://razm.info/12957.
39. **Shougarian R. R.**, Contemporary History and Methodology of International Mediation of Armenian-Turkish Relations, 2016. URL: http://etd.asj-oa.am/4440/1/First_Dtraft_Dissertation_Final_Formatted.pdf.
40. **Mediamax**, Պարզաբանում. Հայաստանում ՌԴ ռազմական, 4 February 2015. URL: https://mediamax.am/am/news/parzabanum/13078 .

Сдана/Հանձնվել է՝ 14.09.2021
Рецензирована/Գրախոսվել է՝ 21.09.2021
Принята/Ընդունվել է՝ 23.09.2021